ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «07» փետրվար 2024թ № 419-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 1572-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման հավելվածի 41.1 կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնին Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների

համապատասխանության գնահատման մարմին նշանակելու մասին» N 1572-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի 1-ին կետում «N 010/S-028) N 1/1-B, N 1/1-A, N 1/2-B, N 1/3-B» թվերը փոխարինել N 010/S-050, N 1, N 2 (A 1) թվերով.

2) Հրամանի 2-րդ կետում «հավատարմագրման տեխնիկական կոմիտեի կողմից հետագա հավատարմագրման կամ հավատարմագրման մերժման մասին համապատասխան որոշման ընդունումը» բառերը փոխարինել «2027 թվականի հոկտեմբերի 6-ը» բառերով:

2. Հրամանի հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերի ցանկի Հայաստանի Հանարպետության տեխնիկական կանոնակարգեր ցանկը շարադրել նոր խմբագրությամբ.

1) 1. ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 16-ի «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքների անվտանգության մասին տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 957-Ն որոշում (միայն տվյալ տեխնիկական կանոնակարգով սահմանված արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք):

2) 2. ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1795-Ն որոշում (միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի 3402 31 000 0, 3402 39 000 0, 3402 41 000 0, 3402 42 000 0, 3402 49 000 ծածկագրերի ներքո՝ տվյալ իրավական ակտում ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք):

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» Փակ բաժնետիրական ընկերության և «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական Փակ

բաժնետիրական ընկերության միջև կնքված Թիվ LI003281 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետի ավարտից 1 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր:

4. Հիմք ընդունելով սույն հրամանի 1-ին կետը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-07 վկայականը վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական՝ Ն-07 և շնորհել նույնականացնող համար՝ Ն-07 (Հ-07) 2024:

5. Սույն հրամանի 1-ին կետով նախատեսված փոփոխությունները գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Տերյանին:

3/1/2024

ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆ

Signed by: KHOJOYAN ARMAN 1507870647

ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ